



ԼԵՐ ԿԱՄՍԱՅԱՆ

Նամակ Քրաֆտ Բոննարին՝ ի Ժնև

Արդար գայրույթ

Հարգելի Քրաֆտ Բոննար.

Թույլ տվեք քանի մը բառով անպատվեմ ձեզի: Դուք ի՞նչ մարդ եք, որ մինչև այսօր չեք կրցած կարգին գործ մը գտնել, հայասիրությամբ կգբաղվիք: Կամ ի՞նչ օգուտ կհուսաք բերել հայ ազգին ձեր սիրովը: Ո՞վ է տեսեր ցայսօր, որ դիվանագիտական գործերու մեջ սերը դեր խաղա: Ո՞ր գորավար սիրով ճակատամարտ մը վաստակեց: Գեներալ Ժոֆրը գերմանացոց սիրելով հաղթեց, թե՛ Մառնի ջուրերուն մեջ խեղդելով: Հա՛, քեզի հետ եմ: Ձերդ մեծության հայտնի չէ՞, որ սերն ամուսնացողներուն միայն հարկավոր բան է՝ այն ալ ամուսնության առաջին տարին միայն...

Ձեզմե շատ ավելի մեծ Քրաֆտներ ու լորդեր սիրեցին հայերը. Լորդ Սալսբորին «ա՛խ» կքաշեր հայոց համար: Գլադստոնը երազի մեջ միշտ հայերու հետ էր. իսկ նախագահ Վիլսոնը, խոմ գիտե՞ք, մեռնելուն՝ ծնողներ կանչելու փոխարեն հայ ազգը կանչեց վերջին տեսության, Վիլսոն՝ որ դիվանագետներու հետ սեղան նստելու ատեն ոչ մեկը չէր համարձակիր առաջինը ձեռքը կերակրի պնակին երկարել, Վիլսոն՝ առանց որի կարծիքին պետություն մը դեպի ձախ սանրած իր մազերը արտոնված չէր աջ կողմի վրա սանրելու...

Դուք, զվիցերացի կաթնավաճառներ, դիվանագիտության մեջ՝ կաթնակերներ: Չվեցերիա: Պզտիկ դեմք մը, որու վրա անճոռնի քթի մը նման բուսեր է Ալպերը:

Մենք այ ունեինք մեր Մասիսը, որ ավելի բարձր է, քան ձեր Ալպերը. ի՞նչ օգուտ տվավ մեզ, բացի քանի մը անհամ ոտանավորներե... Ձեր երկիրը քարտեզին վրա կբռնէ տեղ մը, որ ուշացած ճամփորդ մը, եթէ շուտ տեղ հասնելու մտորքայէրը քիչ մը լայն բանա, վրայեն կանցնի առանց իսկ նկատելու: Պզտիկ պանդոկ մը՝ առջևը պարտեզ, ուր կայցելէն Եվրոպայի նորապսակներն իրենց մեղրամիսը վայելելու: Ձեր ծառերու տակը կ'ծառայի որպէս «վիզիտներու» տեղ, գիշերը սիրահարներու, ցերեկը դիվանագետներու... այնքան «խավվաթ» է:

Մեկ փորձեցք մյուս պետութիւններու շարքին սեղան նստել՝ տեսնենք դանակ-չանգալ կղնե՞ն ձեր առջև ու առանձին պնակ կլցնե՞ն, թէ որևէ պետութիւն կտոնի գոգը և իր ձեռքով կուտա ապուրը, որ չթափեք վրանիդ: Զվիցերիան թող մեկ փորձի դերձակի մը շավար պատվիրե՛ն՝ նայինք շավարի փոխարեն «անձագ» վարտիք չի՞ կարեր...

Պիտի ըսեք՝ ինձի վրա ես բարկացեր, երկի՞րն ինչու մեջ կբերես...

-Ախր, Քրաֆտ Բոննար, շատ եմ բարկացեր, այնքան, որ ոչ միայն ձեր երկիրը, այլև ձեր սահմանակից պետութեանց վրա այլ թափել կուզեմ...

Կսիրեք եղեր հայերը: Երնեկ մեզի, այ ինչ դարդ ունի՞նք... «Մեր» մը, որ մեր դարավոր թշվառութեան պատճառն է դարձեր:

Բիսմարկն իր ժամանակին երբ կըսեր՝ «իմ փտած գինվորը չեմ գոհեր հայուն», հայերը, մանավանդ անոնք, որոնք «սիրվել» կուզեին օտարներէ, սաստիկ բարկացեր էին Բիսմարկին վրա, թէ ինչո՞ւ իր ողջ բանակը չի գոհեր հայուն երբ մյուս պետութիւնները կգոհեն, ինչո՞ւ այսքան եսասեր է երբ մյուսները հայասեր են, ու Բիսմարկին վրա կնայեին որպէս հրեշի մը որովհետև հայուն չէր սիրեր:

Իսկ ես այսօր կըսեմ:

Բիսմարկն ամենամեծ բարեկամն էր հայոց: Եթէ սկզբէն բոլոր դիվանագետները փոխանակ կեղծավորաբար սիրելու՝ անկեղծաբար ատեին, մենք փրկված էինք հիմա:

Այդպէս է:

